

կաթուղիկոսն ամենայն Հայոց, որպէս տեսանի ի բանառոր պատմութենէ ծայրագոյն նուիրակաց Ա. Էջմիածնի որք զծայրագոյն վարդապետութեան պաշտօնն ատանձնեալ շրջէին ընդ ամենայն աշխարհ եւ ծագէ ի ծագ քարողէին ժողովրդեան Հայոց ամենայն համարձակութեամբ եւ բարեկարգէին զիմինակու եւ զեկեղեցիս Հայոց եւ մաքրէին ի մոլորութեանց եւ ի նորամուտ սովորութեանց օաարաց, թէեւ նուիրակութեամն պաշտօն տեւեաց ցեփրհմ՝ կաթուղիկոսն՝ ցամ Տեառն 1830:

Զնոյն կարգ բեմբասացութեան ցանկանալով Վեհափառ Հայրապետիս մերոյ Տ. Տ. Գէորգայ Գ. ի վերանորոգել յԱկեղեցւոց մերում՝ հաճեցաւ ի թիւս ուսանելի գասական առարկայից հանրահռչակ իւրակերտ ձեմարանի Մայր Աթոռոյս տալ ուսուցանել աշակերտաց՝ 7. րդ, 8. րդ, և 9. րդ դասարանաց զգիտութիւնս Աստուածաբանութեան եւ բեմբասացութեան կարի կարեւոր համարելով զայնս պայծառութեան Եկեղեցւոյ մերոյ, որ յիրաւի զուրկ յԱստուածաբանից եւ ի բեմբասաց վարդապետաց գտանէր ցայսօր՝ մանտւանդ ի նորասատան:

Մ. Ե. Ա.

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Ազգիս ներկայ Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գէորգ Գ. իւր Հայրապետական գահը բարձրանալու օրից սկսեալ՝ չէ գաղաքած եկեղեցական ու Ազգային բարեկարգութիւններից, յորոց մին է եւ այս որ երկար տարիների ընթացքում զանազան հանգամանքներից ու ազգեցութիւններից Հայոց եկեղեցական կարգաց մէջ յառաջացած պէտքառութենք եւ նորամուտ օդաց սովորութենալու առաջն առնելու համար 1868 թուականում ուղղեց ամեն վիճակուոր Առաջնորդաց, Թեմական Ատենից, Փոնորդաց եւ Հոգեւոր Կառավարութեանց մի ԿԱՆՈՆԱԿԱՆ կՈՒԴԱԿԱՆ, Նորին սուրբ Օծութիւն նկատելով քահանայացու զըստաց ընտրութեան մէջ ժողովրդեան մասնակցելու իրաւանց եւ պարտականութեանց զեղծումները, նկատելով ժողովրդեան եւ քահանայից միմեանց հետ ունեցած անկարգ ու անկանոն յարաբերութեան ձեւերը, որոնք յառաջացնումեն երկարառակութիւններ եւ առիթ են տալիս թէ ժողովրդեան եւ թէ քահանա-

յից անվերջ բողոքագրութեանց եւ գանգատանաց, մի քանի կարեւոր կանոնների վերանորոգեց, ինչպէս նաև նոյն կանոնական կոնդակի Դ. Ե. Խ. Զ. յօդու ածներով օրինագրեց, որ իւրաքանչյւր ժաղավար համար լինածն ընտրել իւր եկեղեցական գպիրներից արժանաւորը քահանայական կոչման համար եւ իրեւ իւր ընտրածի վարուցը, կենցազավարութեանը, եւ եկեղեցական սպասահարկութեան մէջ արիաջանաւթեանը քաջածանօթէ համարնակիչ՝ վկայէ նոյն հանրագրութեանմէջ այն ամենի մասին. իսկնորա (քահանայացու գպիրի) ուսումը քննուի թեմական Առեանների եւ Հոգեւոր կառավարութիւնների մէջ. Օրինագրեց նոյնպէս, որ ժողովրդականք նախ քան իւրեանց քահանայացուի ձեռնադրութիւնը՝ պայմանագրով պարաւորուին քահանայի ձեռնադրութիւնից յետոյ ապահովագէս պահպանել նորան եւ նորին օձութեան կանոնական կոնդակի համեմատ՝ այնու հետեւ երբեք չպահանջեն Հոգեւոր Խշուանութիւնից տեղափոխել կամ հեռացնել քահանային այն տեղից, որի Եկեղեցւոյ վերայ նո ձեռնադրուած է, որովհետեւ ըստ եկեղեցական կանոնաց ժողովուրդիւր սառագրութեամբ մէկին ընտրելուց եւ քահանաց ձեռնադրել տալուց յետոյ իրաւունք չունի. Հոգեւոր Խշուանութիւնից նոյն քահանայի տեղափոխութիւնը պահանջել:

Բայց Ա. Սինօգրնկատելով, որ Նորին Վեհափառութեան վերոյիշեալ կանոնական կոնդակի հակառակ գործեալ անպակառ են ժողովրդեան կողմից բողոքագրութիւններ, որով ինդրում են հեռացնել իւրեանց եկեղեցուց իւրեանց քահանայն եւ տալ նորա փոխանակ մի այլը՝ կարգագրեց եւ ապագայում այդ տեսակ անտեղի բողոքագրութեանց առաջն առնելու համար հրամանագրեց ամենայն վիճակաւոր Առաջնորդաց, Թեմական Առենից, Յաջորդաց եւ Հոգեւոր կառավարութեանց այսուհետեւ ի նկատի ունենալ, որ երբ ժողովուրդը խնդրագրութեամբ կդիմէ իրանց, մի գողիր՝ քահանայ ձեռնադրել տալու համար՝ Ազգիս Վեհափառ Հայրապետի կանոնական կոնդակի համաձայն պահանջեն պարտաւորական սառագրութիւն ինչպէս քահանայացուից, որով նա պարտաւորուի կալ՝ մնալ մինչեւ իւր կենաց վախճանը նոյն եկեղեցւոյ մէջ, որի վերայ ձեռնադրուած է ինքը եւ վարուի իւր ժողովրդեան հետ իւրեւ ճշմարիտ հայր ամենայն սիրով եւ քաղաքավարութեամբ, որով աւելի կարող է կրկնակի

շահութիլ, նոյնպէս եւ ժողովրդից պահանջեն խոստմնագիր, որով պարտաւորուին նոքա քահանացացու դպրի ընտրութեանը մասնակցելու ժամանակ լինել անկողմնադրան եւ անաշտու՝ եւ ընտրել այնպիսի անձն, որ իւր ուսմամբն ու առաքինի վարքովը վիճայուած լինի, հաւասարի առնելով ժողովրդեանց որ նորին Ա. Օծութեան կանոնական կոնգրակի հրահանգութեան համաձայն նա (ժողովուրդը) իրաւունք ունի ընտրել քահանացական կոչման համար արժանաւոր անձն եւ ներկայացնել նորան թիմուկան Առենին կամ Հոգեւոր կառավարութեանը, եւ այնուհետեւ չունի իրաւունք որպիսի եւ իցէ պատճառ աւ նոյն քահանայի տեղափոխութիւնը պահանջել Հոգեւոր իշխանութիւնից, որը բոլորովին հակառակ է Հայաստանեայց եկեղեցւոյ կանոններին: Կոկեթէ ինքն քահանայն անբաւականութեանց տեղիք կտայ, կարող է ժողովուրդը գիմել իւր մերձաւոր Հոգեւոր թիմական վարչութեանը եւ եթէ նորանից չի ստանալ բաւականութիւն, կարող է գիմել Սինօգին, բացի սորանից ժողովուրդը նոյն խոստմնագրի մէջ պէտք է պարտաւորուի ազգահովիլ քահանայի տնտեսական կառավարութիւնը եկեղեցական կանոններից եւ քաղաքական օրէնքներից սահմանուած տուրքերով կամ վարելահողով, որպէս զի քահանայն աշխարհական աւելորդ եւ անվայիկուչ զրազմունքներից ազատ լինելով, կարողանայ իւր վասն պաշտօնը եւ պարտաւորութիւնները որբութեամբ եւ անթերի կատարել:

Որ եւ իցէ ժողովուրդ մի քահանայացուի համար խնդրելու ժամանակ իւր խնդրագրութեան հետ պէտքէ ներկայացնէ Թեմ, Առենից կամ Հոգ Կառավարութեանց իւր խոսումնադիրը եւ քահանայացուի պարտաւորական պայմանագիրը՝ Ա. Արհօդին ուղարկելու համար:

Ա.Համ Ժ-ողովրդեան խոսումնազրի և քահանայացուի պայմանագրի օրինակները:

ՊԱՐՏԱԳՐԻՒԹՅՈՒՆ ԽԱՆԱԴՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՆ,

Մեր ի ներքոյ ստորագրեալ ժողովրդականը (այս անուն) զեղջ (այս անուն) դաւասի (այս անուն) հանչանզի՞ համակամ՝ յօժարութեամբ մերով ի ժողով զամարելով՝ ի ներկայաւթեան Տանութեամբ և սցնականց նորին՝ բազմութեամբ ձայնից անդամոց հասարակութեանը ի ազգեցաւը զհե-

առաջ համախճական թերթին զար և տամբ միքատոր Թիմական Հոգեոր Կշխանութեան մերոյ վասն ապացայ զարծաղրութեան, որով պարտաւորիք ըստ ուսեալ մեզ իրաւուց ի Ա. հՀամբառ Տ. Տ. Գեորգ Գ. Ամենազիկուէ ամենայն հայոց և ոյնու իսկ ընտրեմք ամենայն անաշտառ թեամբ, անկողմեազահութեամբ և խորհմանար զարժանաւորն ի կոչումն հոգեոր և զվեցիեալն տառընի վարուք և ուսմանը զդպիր (առաջ և աշխանան), զոր և ընդ խոստամբազրուց և ընդ առանձին խնդրազրութեան հասարակաւթեան մերոյ առաջարկեալք ի առարկեամբ, և Թիմական Առենին (կամ Հազեոր Կառավարութեան), միջնորդիլ Արևոդին արժանացուցանել զնա սորազան առաջնուի քահանայթեան, իսկ այնու հետեւ մեք ընտրող ժազգովուրդը չունիմք իրաւունս որպիսի և իցէ պատճառու խնդրել ի Հոգեոր Կշխանութեանէ մերմէ հիմա զիս ացուցացանել կամ աեղափախել զքահանային մեր, քանզի յետ ձեռնազրութեան քահանային մերոյ զազարի իրաւունքը ընտրողաց ի մասին պահանջիլոյ զաեղափախու թիւն քահանային, և ըստ եկեղեցական կանոնաց աեղափախելն զքահանային յիւր եկեղեցայն յոյր վերայ ձեռնազրեցաւն անկորելի է, իսկ թէ քահանային ասիմ տայցէ անբաւականութեան իմմիք, յոյն գեղս պարտիմք միայն զանգանել Թիմական Հոգեոր Կշխանութեան, և ի չքաւականանալն այնու բողոքել ի Արևոդի Ա. Ա. և այսու դրամս պարտաւորիմք առահանվագէս պահանջանել զքահանային մեր սոհմանայն յեկեղեցական կանոնաց և ի քաղաքական օրինաց արօք և վարելահաղովք, որոցէս զի՞ քահանային կարացէ անդրանզ և ազահով լինել ի մասին անտեսական կառավարութեան, և անմերի կառարեցէ զպաշտան իւր սարր ի հասաւառութիւն բանից մերոյ ստորագրեմք և տամբ վաւերացուցանել Տանուտեան մերոյ,

Ի 18 . . . ամիս (այս անուն) զիւզ :

ԽԱՌԱՐԴՆԵԳԻՐ ՔԱՀԱՆԱՑԱՑՈՒ ԴՐՈՒ ԿՈՐՄԵՑ.

Ես | ստորագրեալս (այս անուն) զեզջ թնակիչ զդիր (առաջ և աշխանան) տամ զայս զիր Թիմական Առենի (կամ Հոգեոր Կառավարութեան) առ այն թէ՝ այսու պարտաւորիմք իմով յաժարութեամբ և ուխտեմ, յետ յաջողութեամբն Աստուծոյ արժանանալոյ սրբազն աստիճանի քահանայինթեան ի վերայ (այս անուն) Եկեղեցւոյն մերս զեզջ, ցկեանս կալ և մնալ յեկեղեցւով, յոյր վերայ ձեռնազրեցու եմ, և ոչ երրեք վասն ոք և իցէ պատճառաց խնդրել ի Հոգեոր Կշխանութեանէ իմմէ զաեղափախութիւն յայլ եկեղեցի, քաջ զիտելով, զի կանոնիր Եկեղեցւոյ մերոյ խստիւ արգելուն զաեղափախութիւն քահանայի, ուստի և անկորելի է, այլի խոստանու բաւականանալ և շատանալ այնչափ արօք և հազար ժաղովրդեան սրբան Եկեղեցական կանոնոր և Արքունի օրինոք սահմանեալ և յապրաստ քահանայից:

Եւ ոչ միայն այսչափ ոյլե ըստ պարտուց պաշտամանս յամենայի փոյթ կալութէ ջանալ և ձկնել վարել ընդ ժաղովրդեան ամենայն սիրով

և քաղաքավարութեամբ՝ օրինակ բարեաց լինելով ամենեցուն, և ըստ կարագութեանս փոյթ և խնամ՝ տանել բարոյական՝ մատուռը և հարազատ դաստիարակութեան մանկանց ժողովրդեանս իմայ՝ յորդորելով միշտ զնոսա յուսումն և ի կրթութիւն փութալ, և յամենայն դեպս բանիւ և արդեամբք օժանդակ գոտանիւ Աստուածահաճոյ գործոց՝ անձամբ օրինակ տալով ժողովրդեան:

Ահա թէ Հայաստանեայց եկեղեցւոյ վարչական կաղմակերպութիւնը ի՞նչպէս ժողովրդականութեան սկզբունքների լինը է հիմնուած: Անտարակոյս եթէ Հայ ժողովուրդը, ինչպէս իրան վերաբերուող միւս եկեղեցական գործերի մէջ, նոյնպէս եւ այս իւր քահանայացուի ընտրութեանը մասնակցելուն մէջ իւր աղասի էլեւ մէր ի բարին գործ ածելու ջանք անէր, այն ժամանակ չէին յառաջանակ շատ մի խռովայոյդ եւ ժողովրդեան խաղաղութիւնը վրդավազ անախործ գէտքեր եւ վայրապար չէին ծանրանալ Հոգեւոր Խշիանութեան բաղմաթիւ զբաղմանց բեռը: Եթէ Հայ ժողովուրդը ողջախոհութեամբ թափանցէր Ազգիս ներկայ Վեհափառ Հայրապետի այս լրջամիտ եւ օրինաւոր կարգադրութեանց բարերար հետեւանաց խորքերը, եւ իւր քահանայացուի ընտրութեան գործում առաջնորդուէր մի միսյն անկողմնապահութիւնից եւ անաշառութիւնից եւ ոչ այլ եւ այլ առ շատ շատ էլեւ էլեւ այս ու այն աղասի կամ գահամ այն ճնշող աղդեցութեամբ, այն ժամանակ կընտրուէին անշուշտ ոչ թէ առ առ առ առ առ առ էլեւ էլ, որոնք ձեռնադրուելուց քիչ ժամանակ յետոյ ժողովրդեան համար թէ՝ անօգուտ բեռն են, գառնում եւ թէ խռովութեան տոիթ: այլ կընտրուէին ուսմամբ եւ վարք ու բարբով վկայեալ արժանաւոր անձինք, որով առիթ կարուէր Եկեղեցւոյ ամեն աստիճանի սղասարկուաց մրցել միմեանց հետ իւրեանց գիտութեամբ եւ քահանայավայել բարբով՝ իւրեանց ժողովրդեան սէրն ու համակրութիւնը զրաւելու համար, եւ հետեւաբար քահանայական սուրբ կոչումը արժանաւորաց միայն մատչելի լինելով՝ կստանար իւր վսեմ գիրքն ու նշանակութիւնը, որովհետեւ ժողովուրդը եւս տեսնելով իւր քահանային գիտութեան եւ բարոյականութեան աւելի բարձր աստիճանի վերայ կանգնած քան ինքը, լսելով եւ սովորելով նորա կենցաղավարութիւնից ու բերանից քրիստոնէական կեանքի օրինակներ, կը վերաբերուի նորա հետ ամենայն յարգանօք իբրեւ իւր Հօր,

դաստիարակչի եւ իբրեւ իւր հասարակական եւ մինչեւ անգամ ընտանեկան գործերում առաջնորդի հետ։

Ահա ժողովրդեան այս բնարդղական իրաւունքները ի բարին չգործազրուելուցն է, որ անպակաս են այժմ զանազան քաղաքներից ու գիւղերից ժողովրդական քողոքագրութիւնները եւ խնդիրները թէ առ Ա. Ե. Հ. Հայրապետը եւ թէ առ Ա. Ալիսովը քահանայից տեղափոխութեան մասին։ Ժամանակ է անտարբերութիւնից սթափուելու եւ աչալքութեամբ վերաբերուելու ինչպէս գէտի ամեն ազգային—եկեղեցական գործերը, նոյնպէս եւ գէտի քահանայական խնդիրները։ Կ'նչ ժողովուրդ զգումէ արժանաւոր քահանայի կարեւորութիւնն ու անհրաժեշտութիւնը, եւ անարժանի աւելորդութիւնն ու վնասակարութիւնը, թող ինքն իւր ձեռքով պատրաստէ իւր արժանաւոր քահանայացսւն։ Աչ մի ժողովուրդ իւր արժանաւոր քահանայն չի փոխիլ անարժանի հետ, մանաւանդ թէ՝ վերջինս՝ ուր որ տեղափոխուի, աւելորդ ու վնասակար է։

* * *

Մեր սիրելի Ազգայնոց խորին ու շաղբութեւնը հրաւիրումենք Մայր Աթոռոյս Գէորգեան Ճեմարանի Տեսուչ Պ. Արշակ Նահապետեանի Շոնուց վերայ, որը տպուած է անցեալ Նոյեմբեր և սոյն Գեկտեմբեր ամսոց Արարատի ամսատեսրերի մէջ, որով Յարգոյ Տեսուչը զիմումէ Հայուսումնարանաց Հոգաբարձութեանց՝ ուսումնական խորհուրդների և Հայ՝ ազգային լուսաւորութեան ասոպարիզում գործող անձանց աջակցութեանը՝ ուշային առաջնաշնորհ ծրաբէն դուրսնեան և ըստ անոյնէ դուրսնեան հետ յարաւորնեան ամենակարեսոր գործը զլուխ բերելու համար խնդրելով նորանցից կամ ուղարկել յանուն Ճեմարանի պատրաստի ծրագիրներ և կամ յայտնել իւրեանց հայեացըները և պահանջները ազգային ուսումնարաններից։

Խմբազրութիւնս այսու կհրաւիրէ ամեն՝ հայկական ազգային լուսաւորութեան նուիրական գործով զբաղուողներին, որ ինչով և որչափ կարող է իւրաքանչիւր որ՝ ամենայն Հայ ուսումնարանաց ծրագրներին միութիւն և բարելաւ ու նպատակայարմար ուղղութիւն տալու գործում աջակցէ Յարգոյ Տեսուչ Պ. Արշակ Նահապետեանցին և Գէորգեան Ճեմարանի ուսումնական խորհրդին, որով մեծ ծառայութիւն արած կլինին ազգային կը թութեան գործին։

* * *